ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ իր. գ. թ., դոցենտ Արսեն Աշոտի Թավադյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Համեմատական առևտրային իրավունք

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Համեմատական առևտրային իրավունք» դասընթացը նպատակ ունի ուսանողներին ներկայացնել տարբեր իրավական համակարգերում առևտրային իրավունքի ինստիտուտների կառուցվածքը, առանձնահատկությունները և զարգացման միտումները։ Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են մայրցամաքային և անգլոսաքսոնական իրավական համակարգերում առևտրային իրավունքի կարգավորումները, առևտրային պայմանագրերի տեսակները, ընկերությունների իրավական կարգավիճակը, սնանկության և մրցակցության իրավունքի որոշ հարցեր։

Դասընթացը կենտրոնանում է համեմատական մեթոդի կիրառման վրա՝ հնարավորություն տալով բացահայտել տարբեր իրավակարգերի միջև նմանություններն ու տարբերությունները, ինչպես նաև գնահատել իրավական ինստիտուտների արդյունավետությունը։

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ համեմատական վերլուծության հմտություններ առևտրային իրավունքի ոլորտում և ապահովել տարբեր իրավական համակարգերի խորքային ըմբռնում։

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել տարբեր իրավական համակարգերում առևտրային իրավունքի հիմնական ինստիտուտները
- զարգացնել համեմատական վերլուծության կարողությունները
- ձևավորել իրավական կարգավորումների գնահատման հմտություններ
- ապահովել միջազգային առևտրային հարաբերությունների իրավական հիմքերի ըմբռնում

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը տարբեր պետությունների առևտրային իրավունքն է։

Դասընթացի առարկան առևտրային իրավունքի ինստիտուտների համեմատական ուսումնասիրությունն է:

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացը յուրացնելու համար անհրաժեշտ են քաղաքացիական իրավունքի, միջազգային մասնավոր իրավունքի և իրավունքի տեսության հիմունքների իմացություն:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Գիտելիքները ՝

տարբեր իրավական համակարգերում առևտրային իրավունքի կառուցվածքը

առևտրային պայմանագրերի հիմնական տեսակները և դրանց կարգավորումը

ընկերությունների իրավական ձևերը և գործունեության առանձնահատկությունները

համեմատական իրավունքի մեթոդաբանությունը

Հմտությունները ՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

համեմատել տարբեր իրավակարգերի նորմերը

վերլուծել առևտրային իրավահարաբերությունները

ընդհանրական իմացական հմտությունները՝

իրավական տեղեկատվության քննադատական գնահատում

իրավական խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցում

Կարողունակությունը (կոմպետենցիան) ՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

ինքնուրույն իրավական վերլուծության իրականացում

մասնագիտական որոշումների հիմնավորում

Դասավանդման եղանակները և մեթոդները

- դասախոսություններ
- սեմինարներ և քննարկումներ
- դատական գործերի վերլուծություն
- գործնական առաջադրանքներ
- ինքնուրույն աշխատանք

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Իրավագիտություն» կրթական ծրագրում՝ 3 ակադեմիական կրեդիտ (32 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ժամ դասախոսություն, 15 ժամ գործնական պարապմունքներ։

Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2 -րդ կուրսի 1-ին կիսամյակում։

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1. Դասախոսություններ	**16**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	**36**
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**40**
1.2.1.Քննություններին նախապատրաստում	**20**
1.2.2.Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	**20**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**10**
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	**10**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**քննություն**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար**

			պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1.Համեմատական իրավունքի հիմունքներ	2	1	1
Թեմա 2.Իրավական համակարգեր	2	1	1
Թեմա 3. Առևտրային իրավունքի աղբյուրներ	2	1	1
Թեմա 4. Առևտրային սուբյեկտներ	4	2	2
Թեմա 5.Ընկերությունների տեսակներ	4	2	2
Թեմա 6. Առևտրային պայմանագրեր	2	1	1
Թեմա 7. Վաճառք և մատակարարում	4	2	2
Թեմա 8. Միջազգային առևտրային պայմանագրեր	4	2	2
Թեմա 9. Վարկային հարաբերություններ	2	1	1
Թեմա 10. Մնանկություն	2	1	1
Թեմա 11.Մրցակցային իրավունք (ընդհանուր ակնարկ)	2	1	1
Թեմա 12. Ժամանակակից միտումներ	2	1	1
Ընդամենը	32	16	16

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Համեմատական իրավունքի հասկացություն, մեթոդներ

Թեմա 2. Մայրցամաքային և անգլոսաքսոնական համակարգեր

Թեմա 3. Առևտրային իրավունքի աղբյուրները տարբեր երկրներում

Թեմա 4. Առևտրային սուբյեկտների իրավական կարգավիճակը

Թեմա 5. Ընկերությունների տեսակները և կառուցվածքը

Թեմա 6. Առևտրային պայմանագրերի ընդհանուր բնութագիրը

Թեմա 7. Վաճառքի և մատակարարման պայմանագրեր

Թեմա 8. Միջազգային առևտրային պայմանագրեր

Թեմա 9. Բանկային և վարկային հարաբերություններ

Թեմա 10. Սնանկության իրավական կարգավորում

Թեմա 11. Մրցակցային իրավունքի ընդհանուր հիմունքներ

Թեմա 12. Թվային տնտեսություն և առևտրային իրավունքի զարգացումներ

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Основы европейского интеграционного права. [Текст] : учебник / авт. коллектив: А.Х. Абашидзе [и др.] ; под ред. д-ра юрид. наук, проф. А.Х. Абашидзе, д-ра юрид. наук, проф. А.О. Иншаковой. – М.: Изд-во «Юрист». – 2012. – 607 с.; 18

2. Гражданское и торговое право зарубежных государств. Изд. 4-е, перераб. и доп. В 2 т. / отв. ред. проф. Е.А. Васильев, проф. А.С. Комаров. 2008.

3. Гражданское и торговое право зарубежных стран: Учебное пособие. / Под общей редакцией В.В. Безбаха, В.К. Пучинского. - М.: МЦФЭР, 2004.

4. Гражданское и торговое право Европейского Союза (основные институты). Учебное пособие. / Под ред. Безбаха В.В., Поньки В.Ф., Беликовой К.М. – М.: Изд-во УДН, 2011.

Дополнительная литература

5. Зенин И.А. Гражданское и торговое право зарубежных стран, - М.: Высшее образование, Юрайт-Издат, 2010.

6. Основные институты гражданского права зарубежных стран. / Отв. ред. В.В. Залесский.

- М.: Норма, 2009.

7. Попондопуло В.Ф., Макарова О.А., Коммерческое право зарубежных стран. Учебник для магистрантов//2-е е издание, переработанное и дополненное, Юрайт: М-2017